



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ  
ԽՈՐՀՈՒՐԴ

31.08.2020թ.

Թիվ 11/20

ՈՐՈՇՈՒՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ  
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի Հոգաբարձուների խորհուրդը

որոշում է՝

1. Հաստատել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի «Պահանջների քննության գործընթացը կարգավորող կանոնները»՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):

2. 2020թ. սեպտեմբերի 1-ից ուժը կորցրած ճանաչել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի թիվ 13/17 որոշմամբ հաստատված «Պահանջների քննության գործընթացը կարգավորող կանոնները», բացառությամբ Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի թիվ 13/17 որոշմամբ հաստատված «Պահանջների քննության գործընթացը կարգավորող կանոնները» 3-րդ գլխի, որն ուժը կորցրած ճանաչել 2020թ. նոյեմբերի 1-ից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թ. սեպտեմբերի 1-ից: Սույն որոշմամբ հաստատված Հավելվածի 3-րդ գլուխն ուժի մեջ է մտնում 2020թ. -ի նոյեմբերի 1-ից:

4. Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին՝ մինչև 2020թ. նոյեմբերի 1-ը սույն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ գլխով սահմանված ծանուցման եղանակների փոփոխությունների վերաբերյալ գրություններ ուղարկել Բանկերին, Վարկային կազմակերպություններին, Ապահովագրական ընկերություններին, Վարկային բյուրոյին և Ավտոապահովագրողների բյուրոյին, իսկ մյուս կազմակերպություններին սույն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ գլխով սահմանված ծանուցման եղանակների փոփոխությունների վերաբերյալ ծանուցել տվյալ կազմակերպությունների դեմ պահանջ-դիմում ներկայացվելու դեպքում՝ կազմակերպությանը ուղարկվող առաջին գրությամբ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ